պահեաց առ իւր · և զկնի աւուրց ինչ ել և գնաց 'ի Բեթ-
ղեհէմ առեալ ընդ իւր զՅովհաննէս աբեղայն, զկարապետ
սարկաւագ և զՅարութիւն սպասաւորն · եւ անտի նոքօք
հանդերձ դէմ եղեալ գնաց յԵգիպտոս, ('ի 21 Հոկտեմ-
բերի)։

Եէնիչէրիք Երուսաղէմի 'ի ժամանակէ հետէ ապստամ-
բեալ և տիրեալէին ամրոցի քաղաքին, և ծանրացեալ յոյժ
'ի վերայ բնակչաց իշխէին նոցա եւ դատէին զդատաս-
տան · իսկ Ապտուլլահ Փաշայ, որ Նատէր յԱքքէ, հրա-
մանաւ Թագաւորին առաքեաց 'ի վերայ նոցա զԲեհահեայ
իւր բազմութեամբ զօրաց, և զաշխարեցաւ քաղաքն, եւ
տեւեաց պատերազմն աւուրս իբրեւ 15, այլ քաղաքին և
բնակչաց չեղեւ ինչ վնաս, զի մարտն ընդ ամրոցին էր,
յոր ձգէին արտաքուստ զՀրանօթս։ Զօրավարն զգօնամիտ
թողեալ զմարտն կոչեաց առ ինքն զմեծամեծս քաղաքին
և 'ի ձեռն նոցա նուաճեաց զապստամբսն և տիրեաց բեր-
դին, և զգլխաւորս նոցա առաքեաց առ Բդեշխն, և նորա
պատուեալ զնոսա դարձոյց վերստին յԵրուսաղէմ · այլ
նոքա անկեալ 'ի կասկածանս՝ բաղումք 'ի նոցանէ խոյս
ետուն անտի 'ի Բեբրոն և յԵգիպտոս։ Եւ զօրավարն յանձն
արարեալ զբերդն Քաղաքապետին, որ կարգեալէր 'ի Կու-
սակալէն Դամասկոսի, դարձ արար անդրէն յԱքքէ։ Նուա-
զութիւն հացի յԵրուսաղէմ, չափ ցորենոյ (36 օքա) վաճա-
ռէր 60 դահեկանի, եւ այն հազուագիւտ, նոյնպէս խմա
և զայլ վաճառս, (1826 · 'ի 25 Հոկտեմբերի)։

Պատմեցաք յառաջագոյն համառօտիւ զանցս Յակոբ
վարդապետի և ընկերաց Նորին, ուղեւորելոց յԵթովպիա ·
զկնի վերադարձի նոցին, եկին անտի յամսեանն Սեպտեմ-
բերի անձինք 2, մին քրիստոնեայ Գէորգ անուն, և միւսն
մահմետական հաճի Մէհէմմէտ՝ գրով Թագաւորի իւրեանց
առ մեծազօր փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, թէ
յառաջ քան զայս վարդապետ ոմն յազգէ Հայոց կամելով
գալ 'ի մեր Տէրութիւն, անկեալէ 'ի ձեռս ապստամբելոյ
'ի մէնջ Բդեշխն Ամայաս, և 'ի մէնջ աքսորեալ Ղալթոց
եպիսկոպոսին, զոր անարգութեամբ արտաքսեալ են անտի։ Վասն որոյ խնդրեմք 'ի ձէնջ կամ զնոյն վարդապետ
կամ զայլ ոմն 'ի Հայոց ազգէ անպատճառ առաքեսցես